Արձանագրություն 12

ՀՀ ՖՆ կարիքների համար «ՀՀ ՖՆ-ԵՄԾՁԲ-24/1» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի երկու փուլով մրցույթի նախաորակավորման ընթացակարգի հայտերի գնահատման, արդյունքների ամփոփման և առաջին փուլի հրավերի տեքստերը հաստատելու նիստի

ք. Երևան 19 հունիսի 2024թ.
Ժամը՝ 17:00

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ

Ա. Ավանեսյան – ՀՀ ֆինանսների նախարարի տեղակալ,

Անդամներ

Ա. Մուրադյան - ՀՀ պետական եկամուտների կոմիտեի նախագահի տեղակալ,

Գ. Մանթաշյան – ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարի առաջին տեղակալ,

Ա. Քոչարյան - ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի տեղակալ,

Դ. Գրիգորյան - ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի առաջին տեղակալ,

Ս. Գրիգորյան - Երևանի քաղաքապետի տեղակալ,

Ն. Երիցյան - «Հայաստանի տեղեկատվական համակարգերի գործակալություն» հիմնադրամի տնօրեն,

Ս. Շահնազարյան - ՀՀ ֆինանսների նախարարության գնումների քաղաքականության վարչության պետ,

Լ. Ավետիսյան - «ԷԿԵՆԳ» ՓԲԸ-ի տնօրեն,

Գնումները համակարգող

Ա. Աղաբաբյան – ՀՀ ֆինանսների նախարարության կառավարչական հարցերի կազմակերպման վարչության գնումների բաժնի պետ,

Բացակայում էին՝

Հանձնաժողովի անդամներ

Ք. Ղալեչյան - ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի տեղակալ,

Կ. Բրուտյան - ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ,

Ա. Ջումայան - ՀՀ առողջապահության նախարարի տեղակալ:

1. **<u>Տեղեկություններ հայտերում առկա անհամապատասխանությունների մասով ներկայացված շտկումների վերաբերյալ</u>**

1. Nextenders (India) Private Limited-ը նախաորակավորման հայտարարությամբ սահմանված ժամկետում (1 աշխատանքային օր) չի շտկել հայտում առկա անհամապատասխանությունները՝ ներկայացրել է փաթեթ, որում առկա են նախաորակավորման հայտարարության 16-րդ կետի 5-

րդ ենթակետով պահանջվող փաստաթղթերը, սակայն առկա չեն նախաորակավորման հայտարարության 16-րդ կետի 3-րդ ենթակետով պահանջվող փաստաթղթերը:

2. «Լսոֆտ» ՍՊԸ-ն, Dohatec New Media-ն և StelthLabs LLC-ն նախաորակավորման հայտարարությամբ սահմանված ժամկետում (1 աշխատանքային օր) չեն շտկել հայտում առկա անհամապատասխանությունները:

Ընդունվել է որոշում՝ կողմ – 9, դեմ – 0

2. Հանձնաժողովի կայացրած որոշումները

Հանձնաժողովը որոշեց.

1. Nextenders (India) Private Limited-ի, «Լսոֆտ» ՍՊԸ-ի, Dohatec New Media-ի և StelthLabs LLC-ի կողմից ներկայացված հայտերը գնահատել անբավարար և մերժել:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 9, դեմ – 0:

3. Նախաորակավորված մասնակիցների ցուցակը հաստատելու մասին

Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի 6-րդ կետով՝ գնահատող հանձնաժողովը որոշեց հաստատել «ՀՀ ՖՆ-ԵՄԾՁԲ-24/1» ծածկագրով ընթացակարգի երկու փուլով մրցույթի նախաորակավորված մասնակիցների ցուցակը՝ համաձայն ստորև ներկայացվող աղյուսակի՝

	Մասնակցի անվանումը
1.	EUROPEAN DYNAMICS SA and VXSOFT LLC (համատեղ գործունեությամբ)
2.	EEEBID KFT AN EBIDTOPAY GROUP COMPANY AND SYNERGY INTERNATIONAL SYSTEMS, INC. (համատեղ գործունեությամբ)
3.	Amazon Web Services
4.	Oracle

Ընդունվել է որոշում. կողմ՝ 9, դեմ՝ 0:

4. Առաջին փուլի հրավերի տեքստերը հաստատելու մասին

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 04/05/2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 14-րդ կետի 1-ին ենթակետի պահանջներով՝ գնահատող հանձնաժողովն իր իրավասության շրջանակներում որոշեց հաստատել «ՀՀ ՖՆ-ԵՄԾՁԲ-24/1» ծածկագրով ընթացակարգի երկու փուլով մրցույթի առաջին փուլի հրավերի տեքստերը, որոնք կուղարկվեն ընթացակարգի շրջանակներում նախաորակավորված մասնակիցներին:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 9, դեմ՝ 0:

5. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը և ժամը

«ՀՀ ՖՆ-ԵՄԾՁԲ-24/1» ծածկագրով ընթացակարգի առաջին փուլի հայտերի բացման և գնահատման նպատակով հանձնաժողովի նիստը հրավիրել 2024թ. հուլիսի 10-ին ժամը 12:00-ին:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 9, դեմ – 0

Գնահատող հանձնաժողովի նախագահ՝	AVANESYAN AVAG 2003930574 Digitally signed by AVANESYAN AVAG 2003930574 Date: 2024.06.20 11:21:35 +04'00'	Ա. Ավանեսյան
Հանձնաժողովի անդամներ՝	Digitally signed by MURADYAN ASHOT 1204800073 Date: 2024-06-20 14:29:44	Ա. Մուրադյան

MANTASHYAN GEVORG 1314880934 Digitally signed by MANTASHYAN GEVORG 1314880934 Date: 2024.06.20 13:22:18 +04'00'

Գ. Մանթաշյան

Ա. Քոչարյան

Signed by: GRIGORYAN DAVIT 2102800415
Date: 2024-06-20 16:39:04

Դ. Գրիգորյան

Ս. Գրիգորյան

Ն. Երիցյան

SHAHNAZARYAN SERGEY 1202770106 Digitally signed by SHAHNAZARYAN SERGEY 1202770106 Date: 2024.06.20 11:14:44 +04'00'

Ս. Շահնազարյան

Լ. Ավետիսյան

Գնումները համակարգող՝

Ա. Աղաբաբյան